

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԱԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայիսի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռամկավար Ազատական Կուսակցության կենտրոնական վարչության նորընտիր անդամներին։

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, շնորհավորեց նրանց ընտրության առիթով և իր բարեմաղթանքները հայտնեց նրանց։

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց կուսակցության հայրենանվեր ու եկեղեցանվեր առաքելությունը ազգային կյանքում։ Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց նաև նույն ոգով ու նախանձախնդրությամբ, հայրենիքի շահերի բարձր գիտակցությամբ նպաստել ժողովրդի իղձերի իրականացմանը։